

իմաստութեան՝ այլ սնտի դիտութեամբք ի վերայ իմաստութեան Աստուծոյ պանծալ յուսացեալք եւ յեղեւոյն եւս զըկեալ լինին. զի բաղձանք անհասիցն՝ ի հասանելեացն եւս զըկեն զբաղձացողս, ըստ որում եւ վեհաբանն Արիստոտէլ՝ զԵւրոպայն* կամելով քննել, յոչ հասանելն՝ ինքն ի նմանէ քննեցաւ: Իսկ աստուածաբանութիւնն ըստ կարի ընդունողին պարգեւէ եւ յանհասէն հրաժարեցուցանէ, որպէս յայտ է եւ ի պարագլուխ տեսանողէն. զի թէպէտ զըզոյսփայլն այն մարենի ձկտեցաւ նշմարել, զի եգիպտական կրթութեամբ գոլով վարժեալ բնութեան ընդդէմ զտեսիլն ենթադատեաց, թէ զի մարդ երեւեալն ի ձեւ զգալի հրոյ՝ զգալին մարենի ոչ այրիցէ, եւ մինչ այսպիսի փիլիսոփայական փբացմամբ զննել ընթացաւ, անդրէն երեւեցեւոյն յետս ընկրկեցաւ՝ թէ լոյծ զկոշիկդ յոտից քոյ. այսինքն՝ զսնտորդ այդ եգիպտական հանճար լոյծ ի քէն. զի խորոցն աստուածաբանութեան լինիցիս տեղեակ. զի ոյք ի մեռելոտիս հպիցին անսուրբք կոշեցին. արդ զգեցողդ զմեռելոտիս անմահի քո Աստուծոյ գործոյն ոչ կարես տեղեկանալ: Վասն այսորիկ ուրեմն հրաւիրիմք յսկիզբն ամենայն բարի առաջարկութեանց առ շնորհատուն բարեաց աղօթիւք համբառնալ, զի մի մեռելոտեօք առ անմահին բնութիւն եւ գործս յանդգնիցիմք մերձենալ ի քննութիւն. զի ոյք զառ ոտինսն անգիտանան, ոչ է յարմար առ անշափան բերանաբաց լինիլ, ըստ Աստուածաբանին Գրիգորի: Զի որդիքն է Բարդէս Բարձրագոյն, որ ինքն յայտնաբերեալ ինքն ի մառախլապատիլն յեկամտից, զդէմս նշմարողին ոչ ցուցանէ, վասն այսորիկ վճտագունի կարօտի ապակոյ: Այսպէս եւ աստուածաբանութիւն՝ յոչ ումեքէ զինքն թագուցանէ՝ եթէ զյարմար ընդու-

* Իմա՝ «զԵւրիպոսն», հմմտ. Նոմնոս, էջ 39: